Հանրային հանդիպում
Bixby Knolls Towers-ի առաջարկվող վաճառքի վերաբերյալ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ BIXBY KNOLLS TOWERS-Ի ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎԱՃԱՌՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գլխավոր դատախազն ուսումնասիրում է Bixby Knolls Towers-ի առաջարկվող վաճառքը Կալիֆոռնիայի շահույթ չհետապնդող, հանրօգուտ կորպորացիա հանդիսացող Կենսաթոշակային բնակարանային հիմնադրամի կողմից Կալիֆոռնիայի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Pacifica Companies, LLC-ին: Bixby Knolls Towers-ը գտնվում է Լոնգ Բիչում, Կալիֆոռնիա և իրենից ներկայացնում է 168 (անկախ) բնակելի միավոր և 53 օժանդակ բնակարաններ, ինչպես նաև 99 միավոր տարեցների մասնագիտացված բուժքույրական խնամքի հաստատություն:
Առաջարկվող վաճառքը ներկայացված է Կենսաթոշակային բնակարանային հիմնադրամի և Pacifica Companies, LLC-ի միջև կնքված ակտիվների գնման պայմանագրում:

Առողջապահական հաստատության կողմից առաջարկվող այս գործարքը վերանայվում է, ինչպես պահանջվում է Կորպորացիաների օրենսգրքի 5914 *և հաջորդող բաժիններով*: Առաջարկվող գործարքի պայմանները ձևակերպված են գլխավոր դատախազին ուղղված գրավոր ծանուցագրում: Գրավոր ծանուցագիրը հասանելի է Bixby Knolls Terrace-ի կայքէջի գլխավոր էջի ներքևում տեղադրված հղումով՝ https://bixbyknollstowers.org/:

2022 թվականի նոյեմբերի 15-ին առավոտյան ժամը 11:00-ից սկսած՝ Կալիֆոռնիայի գլխավոր դատախազը հանրային հանդիպում կանցկացնի 3737 Atlantic Avenue Long Beach, CA 90807 հասցեում: Հանրային հանդիպման նպատակն է ստանալ մեկնաբանություններ Bixby Knolls Towers-ի առաջարկվող վաճառքի վերաբերյալ և քննարկել Առողջապահության վրա ազդեցության մասին հայտարարությունը Կենսաթոշակային բնակարանային հիմնադրամի համար, որը պատրաստել է Կալիֆոռնիայի գլխավոր դատախազի կողմից ներգրավված խորհրդատուն: Նախքան հանրային հանդիպումը՝ Առողջապահության վրա ազդեցության մասին հայտարարությունը հասանելի կլինի Կալիֆոռնիայի գլխավոր դատախազության կայքէջում՝ http://www.oag.ca.gov/charities/nonprofithosp:

Մարդիկ կարող են և խրախուսելի է, որ հանրային հանդիպմանը ներկայացնեն իրենց տեսակետներն առաջարկվող գործարքի վերաբերյալ կամ կապվեն գլխավոր դատախազի տեղակալ Հայդի Լեհրմանի (Heidi Lehrman) հետ 916-210-7835 հեռախոսահամարով, Heidi.Lehrman@doj.ca.gov էլ.փոստով, 916-324-5397 ֆաքսի համարով կամ 1300 I Street, Sacramento, California, 95814 փոստային հասցեով: Գրավոր մեկնաբանությունների ստացման վերջնաժամկետն է 2022 թվականի նոյեմբերի 15-ը:

PUBLIC MEETING ON PROPOSED SALE - BIXBY KNOLLS TOWERS - ARMENIAN.DOCX